ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/40832-2024

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-909-09.09.2024,11.11.2024-ՊԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Նախագծի 9-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի «Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերն առաջարկում ենք փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:

2. Նախագծի 9-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկում ենք վերանայել «պաշտոն (պաշտոններ)» ձևակերպումը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասը, համաձայն որի՝ եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Ըստ այդմ նախագծի 9-րդ հոդվածից հանվել են «(պաշտոններ)» բառերը:

3. Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասում Նախագծի 10-րդ հոդվածին կատարված հղումն առաջարկում ենք վերանայել, քանի որ լրացուցիչ միանվագ արձակուրդային վճարի հետ կապված կարգավորումները նախատեսված են Նախագծի 11-րդ հոդվածով:

Ըստ այդմ վրիպակը շտկվել է և Նախագծի 14-րդ հոդվածում հղում է կատարվել 11-րդ հոդվածին:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ